մահմեդական անհաշտ մոլեռանդությամբ։ Նա փուվեց մինչև Մեծ Կովկաս 1387 թ. և կրկնելով երկրորդ անգամ իր առաջխաղացությունը՝ թափանցեց (1401 թ.) ճորա դռնով ավելի հյուսիս՝ Վոլգայի ափերը։ Թվում է, թե այդ ալիքն էլ ողողեց գլխավորապես Ղարաբաղի լեռնաշղթայի մերձտափաստանային ստորոտները՝ Դաշտային Ղարաբաղը, առանց սակայն լեռնաշղթայի այդ կողմը նայող գետահովիտներով վեր մագլցելու և առանց այստեղի հայ տարրի մեջ տեղահանություն առաջացնելու։ Ըստ Չամչյանի[6] բերած, բայց հաստատություն չունեցող վկայության՝ «Ասի ևս յոմանց, թէ».. ստորին Կուրի տափաստաններում և առհասարակ՝ Աղվանքում ապրող գրեթե բոլոր հայերին Լանկ-Թամուրը տեղափոխեց Ղանտահար, որտեղ նրանք կրոնափոխ եղան։ Կարողացա՞ն Լանկ-Թամուրի զորքերը մտնել Զանգեզուր և այնտեղի հայերին էլ քշել հեռավոր արևելյան գավառները, այդ հարցը մնում է մութ։ Նրա գլխավորած ալիքը զարնվելով Երնջակի և Շահապոնքի պարիսպներին՝ շարժվելով ավելի դեպի արևելք, պիտի հանդիպեր Զանգեզուր-Ալանգյազի լեռների հուժկու պատնեշին։ Շրջելով այս պատնեշը արևմուտքով և հյուսիսով, ալիքը ողողեց արևելյան Վրաստանը (Տրփղիս) և Կուրի միջին և ստորին հոսանքների ափերին՝ Արցախյան դաշտավայրերը, այստեղ, մանավանդ Մուղանի դաշտում, հանդիպեց մի դար ու կես առաջ վերաբնակված ցեղակիցներին։ Լանկ-Թամուրը այս տաք դաշտավայրում անց է կացրել ձմեռը[7] Սեբաստիա ուղևորվելուց առաջ։ Պետք է կարծել, որ նա այդ տափաստաններից, որտեղ նրա առջև բաց էր դյուրին անցանելի մուտքը Շահիյոլով դեպի Զանգեզուր, հնարավորություն պիտի ունեցած լիներ կրկին ու կրկին անգամ իր հրոսակները մտցնելու նաև այդ գավառը. այդտեղից էլ, գլխավորապես նրա արևելյան կողմերից, հեռու քշելու երկրագործ հայ տարրը և մանավանդ հմուտ արհեստավորներին, որոնցով նա աշխատում էր բարձրացնել իր միջին-ասիական քաղաքների տնտեսությունը։ Մինչև այսօր էլ Զանգեզուրի գյուղերում, հիշելով Լանկ-Թամուրի անունը՝ նրա անվան հետ են կապում գավառում կատարած ավերածություններն ու ջարդերը։ Սակայն ինչքան էլ մեծ լիներ թե՛ տեղում կոտորած և թե՛ տեղահան արված հայերի թիվը, անշուշտ այս գավառը ավելի քիչ էր վնասվել Լանկ-Թամուրի վայրագություններից Հայաստանի այլ մասերի համեմատությամբ։ Այդտեղ թե՛ իշխանական տները և թե՛ եկեղեցական կազմակերպությունը պահպանվեցին առանց ավելի մեծ խանգարումների։ Այս եզրակացությանը պետք է հանգել ի նկատի ունենալով այն, որ Սիսականում-Զանգեզուրում այնուհետև էլ ուժեղ էր մնում մելիքական-ֆեոդալական իշխանությունը, որը նեցուկ էր հանդիսանում և վանական հիմնարկների գործունեության լայն ծավալման համար։ Լանկ-Թամուրի արշավանքների ժամանակ և անմիջապես հետո Տաթևի վանքում Գրիգոր Տաթևացին գտնում է հանգիստ իր երկար թափառումներից հետո և հավաքելով իր շուրջը մեծ թվով աշակերտություն, ստեղծում է մեծ դպրոց—scola, որը այնուհետև չափազանց ներգործող, ակտիվ դեր էր կատարում թե՛ Էջմիածնի կաթողիկոսության վերականգնման և թե՛ հաջորդ տասնամյակներում այդ վերականգնված հայրապետության վարած քաղաքականության ուղղության գործում։

---

[6] Չամչեան Մ., Պատմութիւն հայոց, հ. Գ, 1784, էջ 430։ Տե՛ս նաև Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 32։

[7] Ռույ Գոնցալեց-դի Կլավիխոյի ուղեգրությունը։ Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, 1932, հ. Ա, էջ 99։